ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի առաջին մասի 6–րդ կետի բ ենթակետի պահանջները Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության որոշեց.

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-69 ծածկագրով հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի շրջանակներում հայտերի գնահատման նիստի ընթացքում մասնակից «ՏՐԱԿ» ՍՊ ընկերության հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էր անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

«ՏՐԱԿ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբոջական նկարագրի /հրավերի հավելված 1.1/ 23-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված բնութագրին, նշված չի եղել ապրանքի ֆիրմային անվանումը և ներկայացված դիմում-հայտարարությունում /հրավերի հավելված 1/ նշված է, որ հայտ է ներկայացվում 23-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, սակայն հայտ է ներկայացրել միայն 23-րդ չափաբաժնի մասով: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել է նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկել «ՏՐԱԿ» ՍՊ ընկերությանն՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սակայն «ՏՐԱԿ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամանակահատվածում գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել շտկման ենթակա փաստաթղթերը:

Գնահատող հանձաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ

կետով՝ որոշեց մասնակից «ՏՐԱԿ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Պատվիրատուի ղեկավար՝

Ա. Ֆիդանյան

« 17 » « 04 » 2025թ.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՏՐԱԿ» ՍՊԸ	00171178	ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց փ. 51/19			**Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ ենթակետի , ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-69 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը գնահատվում է անբավարար և ենթակա է մերժման, քանի որ մասնակիցը օրենքով սահմանված ժամկետներում չի կարարել համապարասխան շտկումները:**	ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-69 Պատվիրատուի ղեկավարի «17»«04»2025թ. որոշման համաձայն